ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 82

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

10-ը հուլիսի 2025թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 34 անդամներից 24-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Մ. Մ. Օթարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ Մ. Մ. Օթարյանը քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. 2025-2026 ուստարում ԵՊՀ ԻՄ ֆինանսական միջոցների հաշվին տրամադրվող անվանական կրթաթոշակների քանակն ու չափը հաստատելու մասին:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Մ. Օթարյան)

2. Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2025թ. հարցման արդյունքների մասին:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ կրթական բարեփոխումների և որակի ապահովման (ԿԲՈԱ) բաժնի վարիչի պարտականությունները կատարող(պ/կ)՝ Ա.Հ. Մակարյան)

3. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հաստատում:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ԿԲՈԱ բաժնի վարիչի պ/կ Ա.Հ. Մակարյան)

4. Հաղորդում ԵՊՀ ԻՄ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՊԿՇՀ բաժնի վարիչ՝ Լ. Գ. Բեգինյան)

5. Հաղորդում ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ի 2024-2025 ուստարվա գործունեության մասին:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ՝ Ս. Աբազյան)

6. ‹‹Երևանի պետական համալսարան›› հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժնի կանոնակարգի հաստատում:

   (*Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ԿԲՈԱ բաժնի վարիչի պ/կ Ա.Հ. Մակարյան)*

7. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի Ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժնի կանոնակարգի հաստատում:

   (*Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Ս. Աթոյան)*

8. Ընթացիկ հարցեր:

   8.1. ԵՊՀ ԻՄ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, հ.գ.թ. Ռ. Աղուզումցյանի խմբագրությամբ «Մասնագիտական կողմնորոշում» ուղեցույցը հրատարակման երաշխավորելու մասին:

   (*Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ մեթոդական խորհրդի նախագահ՝ Ա.Հ. Մակարյան)*

ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը նշեց, որ նիստին չի մասնակցում ԵՊՀ ԻՄ ուգը նախագահ Ս. Աբազյանը, որը ՀՀ-ում չի գտնվում և չի տեղեկացրել մեզ՝ նախօրոք հարցը օրակարգից հանելու համար, նիստին չեն մասնակցում նաև ՈՒԳԸ մյուս ներկայացուցիչները՝ տարբեր պատճառներով, անհրաժեշտ է օրակարգից հանել «Հաղորդում ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ 2024-2025 ուստարվա գործունեության մասին» հարցը և տեղափոխել հաջորդ նիստ:

Մ. Օթարյանը նշեց, որ ՈՒԳԸ նախագահը պետք է ավելի պատասխանատու լինի նման հարցերում և անհրաժեշտ է ՈՒԳԸ ղեկավարման խնդիրներին լուծում տալ: Նշվեց, որ ՈՒԳԸ ներկայացուցիչ Աբազյանի բացակայությունն անթույլատրելի է, և պետք է դրա վերաբերյալ որոշակի հետևություններ անել: Չնայած նրան, որ Աբազյանը լավ ուսանող է, կազմակերպչական խնդիրներ կան (որոշ ֆակուլտետներում ներկայացուցիչներ չկան և

այլն)։ Մ. Օթարյանը առաջարկեց ՈւԳԸ աշխատանքների մեջ ներգրավել «ավելի մոտիվացված մարդ»՝ հաշվի առնելով նաև, որ ներկայիս ղեկավարը չորրորդ՝ ավարտական կուրսի ուսանող է։

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ **որոշվեց**.

Որոշում

- **Հաստատել նիստի օրակարգը.**

1. 2025-2026 ուստարում ԵՊՀ ԻՄ ֆինանսական միջոցների հաշվին տրամադրվող անվանական կրթաթոշակների քանակն ու չափը հաստատելու մասին։

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Մ. Օթարյան)

2. Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2025թ. հարցման արդյունքների մասին:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ԿԲՈԱ բաժնի վարիչի պ/կ՝ Ա.Հ. Մակարյան)

3. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հաստատում:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ԿԲՈԱ բաժնի վարիչի պ/կ Ա.Հ. Մակարյան)

4. Հաղորդում ԵՊՀ ԻՄ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՊԿՇՀ բաժնի վարիչ՝ Լ. Գ. Բեգինյան)

5. ‹‹Երևանի պետական համալսարան›› հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժնի կանոնակարգի հաստատում։

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ԿԲՈԱ բաժնի վարիչի պ/կ Ա.Հ. Մակարյան)

6. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժնի կանոնակարգի հաստատում։

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Ս. Աթոյան)

7. Ընթացիկ հարցեր։

7.1. ԵՊՀ ԻՄ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, հ.գ.թ. Ռ. Աղուզումցյանի խմբագրությամբ «Մասնագիտական կողմնորոշում» ուղեցույցը հրատարակման երաշխավորելու մասին։

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ մեթոդական խորհրդի նախագահ՝ Ա.Հ. Մակարյան)

Օրակարգի առաջին՝ ‹‹2025-2026 ուստարում ԵՊՀ ԻՄ ֆինանսական միջոցների հաշվին տրամադրվող անվանական կրթաթոշակների քանակն ու չափը հաստատելու մասին›› հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ.Մ. Օթարյանի հաղորդումը։

Պարոն Մ. Օթարյանը նշեց, որ 2025-2026 ուստարում ԵՊՀ ԻՄ ֆինանսական միջոցների հաշվին տրամադրվող անվանական կրթաթոշակներն են.

	Ստորաբաժանումը	**Քանակը/ հատ**	**Չափը/դրամով**
1	Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	**4 (**Շառլ Ազնավուր, Գրիգոր Նարեկացի, Դավիթ Անհաղթ, Մխիթար Գոշ)	10 000
2	Բնական գիտությունների ֆակուլտետ	**1 (**Համլետ Կարայան)	10 000

3	Տնտեսագիտության ֆակուլտետ	**2 (**Սահակ Զորափորեցի, Շավարշ Մարգարյան)	10 000
4	Կիրառական արվեստի ֆակուլտետ	**1 (**Սպարտակ Սարգսյան)	10 000
5	Համամասնաճյուղային	**3 (**ԵՊՀ , Արտակ Յուցուլյան, Արցախյան 44-օրյա պատերազմում անմահացած ԵՊՀ ԻՄ ուսանողների և շրջանավարտների անուններով, յուրաքանչյուր կիսամյակում մեկի անվամբ)	10 000

Մ. Օթարյանը նշեց, որ կան նաև արտաբյուջետային կրթաթոշակներ, որոնց քանակն ու չափը փոխվում են: Մասնավորապես նշեց, որ Իջևանի համայնքապետարանի հետ կա պայմանավորվածություն ԵՊՀ ԻՄ-ում միանվագ կրթաթոշակ տրամադրելու մասին:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի ժ/պ, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը և այլք: Մասնավորապես Ն. Գրիգորյանը նշեց, որ հումանիտար գիտությունների ֆակուլտետում յոթ կրթական ծրագրերի համար հատկացվում է 4 կրթաթոշակ, լավ կլիներ ավելացվեր: Մ. Օթարյանը նշեց, որ այս պահին այդ հնարավորությունը չկա, մյուս կողմից կան նաև համամասնաճյուղային կրթաթոշակներ, իսկ քաղաքականությունն այս ուղղությամբ մեզ հայտնի. քչացնել կրթաթոշակների թիվը՝ բաձրացնելով տրվող գումարի չափը: Մ. Օթարյանը շեշտեց, որ կրթաթոշակները շնորհելիս հիմք պետք է ընդունել ոչ միայն միջին որակական գնահատականը (ՄՈԳ), այլ նաև ուսանողի հասարակական ակտիվությունը:

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

Որոշում 82/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով, ինչպես նաև «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի 35-րդ կետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1 Հաստատել ԵՊՀ ԻՄ-ում 2025-2026 ուստարում ԵՊՀ ԻՄ ֆինանսական միջոցների հաշվին տրամադրվող անվանական կրթաթոշակների քանակն ու չափը համաձայն հավելված 1-ի:

2 Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

Օրակարգի երկրորդ՝ «Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2025թ. հարցման արդյունքների

մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԿԲՈԱ բաժնի վարիչի պ/կ Ա.Հ. Մակարյանի հաղորդումը:

Ա. Մակարյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ ուսանողակենտրոն գործունեությունն ու թափանցիկ կառավարումը հնարավորություն են տալիս և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցներին մշտապես իրազեկված և տեղեկացված լինել բոլոր գործընթացներից, նաև դառնալ դրանց արդյունավետության գնահատման անմիջական մասնակիցներ և իրենց առաջարկներով աջակցել դրանց բարելավմանն ու զարգացմանը:

ԵՊՀ ԻՄ կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժինը յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում տարբեր մեխանիզմներով և ուսումնասիրություններով վերհանում է շահակիցների կարիքները և խնդիրները, հավաքագրում է նրանց առաջարկները, վերլուծում և տրամադրում համապատասխան ստորաբաժանումներին՝ լուծումներ առաջարկելու համար:

Հերթական ամենամյա ուսումնասիրությունն առցանց հարցման միջոցով իրականացվել է մասնաճյուղի՝ 2024-2025 ուստարվա շրջանավարտների (բակալավրիատի և մագիստրատուրայի) շրջանում: Հարցման նպատակն էր պարզել շրջանավարտների բավարարվածությունը մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպումից և իրականացումից, պրակտիկաների կազմակերպումից, մատուցվող ծառայություններից և ռեսուրսներից, համալսարանական միջավայրից, գնահատման գործող համակարգից, գնահատման օբյեկտիվությունից և այլն:

Թե՛ բակալավրիատում, թե՛ մագիստրատուրայում գրանցվել են առցանց հարցումների տեսանկյունից մասնակցության բարձր ցուցանիշներ:

Հարցման արդյունքները մշակվել և ընդհանրացվել են ըստ ֆակուլտետների, ըստ կրթական ծրագրերի և գիտխորհրդի անդամներին են ներկայացվել միջին գնահատականներով կամ տոկոսներով:

Արդյունքների համաձայն՝ բակալավրիատում հարցման մասնակից ուսանողների 47.4%-ը պատրաստվում է շարունակել ուսումը: Հատկապես մեծ է ցանկությունը «Անգլերեն լեզու և գրականություն», «Հայոց լեզու և գրականություն», «Պատմություն», «Զբոսաշրջություն», «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերի շրջանավարտների դեպքում: Հարցման մասնակիցներից 36.8%-ն արդեն աշխատում է, որից 12%-ը՝ մասնագիտությամբ, իսկ ևս 24.8%-ն արդեն կողմնորոշված է աշխատանքի հարցում: Մագիստրատուրայում աշխատանքային զբաղվածության հարցի վերաբերյալ 2024 թ. արդյունքները վկայում են, որ մեծ թվով շրջանավարտներ աշխատում են, սակայն միայն մի մասն է աշխատում մասնագիտությամբ: 2025 թվականին նկատվում է աշխատաշուկայում մասնագիտական զբաղվածության զգալի աճ՝ համեմատած 2024-ի հետ:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կողմից կոռուպցիոն ռիսկերի նվազման և կոռուպցիոն երևույթների դրսևորման բացառման համար իրականացվող աշխատանքներն արդարացված են: Այսպես՝ «Ուսումնառության ընթացքում հարկադրվա՞ծ եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով» հարցին 2024 և 2025 թվականներին բոլոր հարցվածները (100%) նշել են, որ մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով, հարկադրված վճարելու դեպքեր չեն եղել:

Բակալավրիատում հարցման մասնակից շրջանավարտների 94.4%-ը նշել է, որ խորհուրդ կտա իր մերձավորներին կրթություն ստանալ ԵՊՀ ԻՄ-ում, իսկ մագիստրատուրայում՝ շրջանավարտների 95%-ը:

Շրջանավարտների կողմից մասնաճյուղի համար նշված ուժեղ կողմերից են կրթության բարձր որակը, պրոֆեսիոնալ դասախոսական կազմը՝ օժտված հիանալի մարդկային որակներով, ղեկավարության սրտացավությունը, ուսանողակենտրոն մոտեցումը, վարձավճարների մատչելիությունը և այլն:

Ա. Մակարյանի հաղորդումը ամբողջական կարող եք տեսնել **հավելված 2-ում**:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ.Օթարյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի ժ/պ, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պ/կ բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի պ/կ Ա. Մարգարյանը, ուսանողներ՝ Մ. Եղիկյանը, Մ. Վարդանյանը և այլք:

Մասնակիցները նշեցին այն հանգամանքը, որ չնայած մասնագիտական կարողություններից բավարարվածությունը բարձր է (73%), գործնական կարողությունների ձևավորումից ուսանողները քիչ են բավարարված (54%): Նաև ընդգծվեց օտար լեզուների ուսուցման որակի խնդիրը: Առաջարկվեց քննարկել բավարարվածության տվյալներն ըստ ֆակուլտետների, որպեսզի հնարավոր լինի կենտրոնանալ կոնկրետ մասնագիտությունների խնդիրների վրա: Նշվեց, որ պրակտիկայի տեղերի սահմանափակությունը տարածաշրջանային լինելու հետևանք է: Մ. Օթարյանը մասնավորապես շեշտեց այն հանգամանքը, որ մագիստրատուրայում գնահատականների անկումը պայմանավորված է «Գործարար վարչարարություն» կրթական ծրագրի ուսանողների անհիմն բարձր ամբիցիաներով և սպասելիքներով, որոնք ձևավորվել են բակալավրիատում երբեմն անհիմն բարձր գնահատականների շնորհիվ: Նա նշեց, որ ուսանողները, ովքեր բակալավրիատում ստանում էին 12-13 միավոր, մագիստրատուրայում ակնկալում էին 19-20 միավոր և դժգոհում, երբ ստանում էին 17-18 միավոր: Որպես լուծում, ներկայացվեց նախաթեստերի ներդրման դրական փորձը, որը կտրուկ ավելացրել է քննություններից «լուծարքների» թիվը (նախկին 3%-ից՝ 56%), ինչը վկայում է նախկինում գնահատման չափից դուրս շռայլ լինելու մասին: Ընդգծվեց, որ այս շռայլությունը վնասում է ուսանողին՝ ստեղծելով կոմֆորտ զոնա և անիմաստ ամբիցիաներ: Ընդգծվեց տեղեկատվական տեխնոլոգիաների գործիքների տիրապետման մակարդակի նվազումը (91%-ից 47%), ինչը պահանջում է դասավանդվող բովանդակության և գործնական կիրառումների ուսումնասիրում: Գ. Սիրոյանը ընդգծեց, որ դպրոցներում օգտագործվող գործիքները սպեցիֆիկ են, և եթե համալսարանը չի դասավանդում դրանք, ուսանողները դժգոհ են մնում:

Առաջարկվեց նաև խուսափել մեկ ղեկավարի կողմից մեծ քանակությամբ աշխատանքների ղեկավարումից (առավելագույնը երեք), ներգրավել արտաքին շահառուներ և ապահովել պարբերական հետադարձ կապ՝ ուսանող-ղեկավար համագործակցության որակը բարելավելու համար: Արտահայտվողները նաև մտահոգություն հայտնեցին, որ գրախոսությունները հաճախ ընկալվում են որպես անձնական թշնամանք, և որ դասախոսները խուսափում են օբյեկտիվ գրախոսություններ գրելուց՝ ընկերական հարաբերությունները չվնասելու համար: Քննարկվեց նաև արհեստական բանականության գործիքների օգտագործումը ավարտական աշխատանքները գրելու ժամանակ, դրանց հնարավոր դրական և բացասական կողմերը:

Նշվեց, որ չնայած համալսարանն ունի էլեկտրոնային գրադարաններին հասանելիություն (ինչպես ԵՊՀ-ն), դասախոսները չեն օգտվում դրանցից և չեն ուղղորդում ուսանողներին, որը հանգեցնում է դժգոհության Մասնաճյուղում առկա մասնագիտական գրականությունից:

Քննարկվեց նաև մասնակցությունը բարձրացնելու մեխանիզմներ, այդ թվում՝ հարցումների ավարտը կապել դիպլոմ ստանալու գործընթացի հետ: Հետագայի համար առաջարկվեց Ուսանողական խորհուրդը և Ուսանողական գիտական ընկերությունը առանձին դիտարկել՝ որպեսզի հստակ երևա նրանց աշխատանքի գնահատականը:

Ընդհանուր առմամբ, նիստի մասնակիցներն ակտիվորեն արձագանքեցին զեկույցի բոլոր կետերին՝ մտահոգություններ հայտնելով, պատճառներ փնտրելով և կոնկրետ առաջարկություններ ներկայացնելով ուսումնական գործընթացը բարելավելու համար:

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

Որոշում

- ԵՊՀ ԻՄ ԿԲՈԱ բաժնի վարիչի պ/կ Ա.Հ. Մակարյանի հաղորդումը «Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2025թ. հարցման արդյունքների մասին» հարցի վերաբերյալ ընդունել ի գիտություն:

Օրակարգի երրորդ **՝**«Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ԿԲՈԱ բաժնի վարիչի պ/կ՝ Ա.Հ. Մակարյան հաղորդումը:

Ա. Մակարյանը նշեց, որ ընթացակարգով նախատեսված է, որ կրթական ծրագրերը ֆակուլտետներում քննարկվելուց և հաստատվելուց հետո անցնում են Կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժնով, ապա տրվում Ուսումնամեթոդական վարչությանը որոշակի տեխնիկական ստուգումների համար: Բովանդակային էական փոփոխություններ այս տարվա կրթական ծրագրերում չեն եղել:

Կիրառական արվեստի ֆակուլտետի մեկ ծրագրում եղել են փոքր փոփոխություններ, որոնք կապված են դասընթացների փոփոխության հետ, մասնավորապես՝ որոշ ընտրովի դասընթացներ փոխվել են հիմնականի, մնացած տեղերում փոխվել են միայն գնահատման ձևերը:

Բովանդակային փոփոխությունը տեղի է ունեցել Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա (ԻԿՄ) ծրագրում, որի ամբողջական ծրագիրը դեռևս առկա չէ, քանի որ համապատասխան բաժինը չի հասցրել դիտարկել որոշ փոփոխություններ: Այնուամենայնիվ, հիմնական մասն առկա է, և ծրագիրը պետք է հաստատվի:

Ա. Մակարյանը նշեց, որ այս տարի ընդունվող բոլոր ուսանողների համար կրթական ծրագրում ֆիքսվել է նախաթեստի գաղափարը: Սա վերաբերում է ընդհանուր կրթամասի այն դասընթացներին, որոնց համար դա հնարավոր է: Այդ դասընթացներն են՝ լեզուները (օտար լեզուներ, հայոց լեզու), հայոց պատմությունը, խոսքի մշակույթը, քաղաքացիական պաշտպանությունը և առաջին բուժօգնությունը: Նա նշեց, որ բոլոր կրթական ծրագրերում առկա «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ» դասընթացում ներառվել է արհեստական բանականության շեշտադրում՝ ուսանողներին ոչ թե հին նյութեր, այլ պրոմպտ ինժեներիայի հիմունքներ և պարզ պրոմպտեր սովորեցնելու նպատակով, որը բնագիտական ֆակուլտետում արդեն մտել է կրթական ծրագրի մեջ:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը, գիտքարտուղար Մ. Աթոյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պ/կ, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պ/կ բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանը, Ինֆորմատիկայի և ծրագրավորման ամբիոնի վարիչի ժ/պ Ա. Հովակիմյանը, ասիստենտ Մ. Ճաղարյանը և այլք։

Արտահայտվողները նշեցին, որ ընթացակարգերն անհրաժեշտ է պահպանել և անընդհատ բարելավել կրթական ծրագրերը, առանց ավելորդ փոփոխությունների։

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

Որոշում 82/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 6-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 6-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1 Հաստատել ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերը համաձայն հավելված 3-ի։

2 Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

Օրակարգի չորրորդ՝ «Հաղորդում ԵՊՀ ԻՄ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ՊԿՇՀ բաժնի վարիչ՝ Լ. Գ. Բեգինյանի հաղորդումը։

Լ. Բեգինյանը նշեց, որ 2024-2025 ուստարում, ըստ բակալավրի և մագիստրատուրայի աշխատանքային ուսումնական պլանների, Պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության (ՊԿՇՀ) բաժնի կողմից կազմակերպվել է 49 պրակտիկա (ինը ուսումնական - 5՝ առկա ուսուցում, 4 հեռակա ուսուցում, տասներկու մանկավարժական - 8՝ առկա ուսուցում, 4՝ հեռակա ուսուցում, քսանութ մասնագիտական - 18՝ առկա ուսուցում, 10՝ հեռակա ուսուցում)։

Պրակտիկաները կազմակերպվել են ըստ ժամանակացույցի և մասնագիտական ամբիոնների կողմից ՊԿՇՀ բաժին ներկայացված ծրագրերի։ Ուսումնական պրակտիկան կազմակերպվել է «Պատմություն», «Զբոսաշրջություն», «Դեկորատիվ-կիրառական արվեստ» և «Դիզայն» կրթական ծրագրերով։ Գործընթացին մասնակցել է 122 ուսանող։ Ուսումնական պրակտիկայի ընթացքում, կրթական ծրագրի կարիքներից ելնելով, ուսանողները որոշ տեսակի աշխատանքների կատարմամբ (հանձնարարված թեմաների ուսումնասիրություն, տեղեկատվության հավաքագրում, համակարգում, վերլուծում, ստեղծագործական աշխատանքների կատարում) զարգացրել են իրենց կարողությունները՝ ուղղված իրենց հետագա մասնագիտական գործունեությանը։ Դրանք կազմակերպվել են մասնաճյուղում և մասնաճյուղից դուրս՝ ընդգրկելով տարբեր բնաշխարհագրական տարածքներ և օբյեկտներ։ Ուսումնական պրակտիկաների ստուգարքների ամփոփմամբ ակադեմիական պարտք է կուտակել հեռակա ուսուցման «Պատմություն» կրթական ծրագրի 5 ուսանող։

Մանկավարժական (նաև մասնագիտական) պրակտիկաների ավարտին ՊԿՇՀ բաժնի կողմից կատարվել է արտաքին շահակիցների հարցում՝ նպատակ ունենալով պարզել արտաքին շահակիցների կարծիքը պրակտիկա անցած ուսանողների մասնագիտական և անձնային որակների վերաբերյալ։

Իրականացվել է նաև մասնագիտական պրակտիկայի վերաբերյալ ուսանողական հարցում e-learning.ysu.am համակարգի միջոցով՝ նպատակ ունենալով ստանալ հետադարձ կապ պրակտիկայի ամբողջ ընթացքի վերաբերյալ (սկսած նախապատրաստությունից մինչև ամփոփիչ գնահատում):

Ընդգծվեց, որ այդ գնահատականները կարևոր հիմք են ապագա կազմակերպչական և մեթոդական բարելավումների համար: Նշվեց, որ ՊԿՇՀ բաժինը արտաքին շահակիցների և ուսանողական հարցման արդյունքների վերլուծությունը կտրամադրի մասնագիտական ամբիոններին՝ քննարկումներ կատարելու և համապատասխան որոշումներ կայացնելու համար:

Լ. Բեգինյանի ամբողջական հաղորդումն կարող եք տեսնել հավելված 4-ում:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ.Օթարյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի ժ/պ, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պ/կ բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի պ/կ Ա. Մարգարյանը, ուսանողներ Մ. Եղիկյանը, Մ. Վարդանյանը և այլք:

Արտահայտվողները ընդհանուր առմամբ կարևորեցին պրակտիկայի կազմակերպման բարելավմանն ուղղված հետևյալ առաջարկները. ավելացնել գործնական նախագծերը, որպեսզի ուսանողները կարողանան աշխատել իրական խնդիրների վրա, Հոգեբանություն կրթական ծրագրի համար առաջարկվել է ավելացնել շաբաթական պրակտիկայի քանակը՝ կազմակերպության հետ համաձայնեցված, և ընդլայնել պրակտիկայի վայրերը, «Զբոսաշրջություն» ծրագրի համար առաջարկվել է պրակտիկան կազմակերպել զբոսաշրջային ակտիվ շրջանում և այլն:

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

Որոշում

- ԵՊՀ ԻՄ ՊԿՇՀ բաժնի վարիչ Լ. Բեգինյանի հաղորդումը «Հաղորդում ԵՊՀ ԻՄ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին» հարցի վերաբերյալ ընդունել ի գիտություն:

Օրակարգի հինգերորդ՝ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժնի կանոնակարգի հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի նախագահ, ԿԲՈԱ բաժնի վարիչի պ/կ Ա.Հ. Մակարյանի զեկույցը:

Ա. Մակարյանը նշեց, որ նախկինում գոյություն ունեցող երկու առանձին բաժինները՝ «Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման» և «Մասնագիտական կրթության որակի ապահովման» միավորվել են մեկի մեջ, միավորվել են գործառույթները, խնդիրները և նպատակները՝ ընդգրկելով նախկին երկու բաժինների աշխատանքային ոլորտները՝ սա օպտիմալացման մաս էր կազմում: Նմանատիպ օպտիմալացում է իրականացվել նաև հաշվապահության և գնումների բաժինները միավորելու հարցում:

Ա. Մակարյանը նշեց, որ կանոնակարգի նախագիծը ուղարկվել էր որակի ապահովման հանձնաժողովի անդամներին, և ստացված առաջարկությունների համաձայն՝ այն վերախմբագրվել է:

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

Որոշում 82/3

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ‹‹Երևանի պետական համալսարան›› հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժնի կանոնակարգը համաձայն հավելված 5-ի,
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2020թ.-ի սեպտեմբերի 30-ի թիվ 47 նիստում 47/5 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի կանոնադրությունը,
3. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2016թ.-ի դեկտեմբերի 26-ի թիվ 20 նիստում 20/5 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կանոնադրությունը,
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Օրակարգի վեցերորդ՝ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժնի կանոնակարգի հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Ս. Աթոյանի զեկույցը:

Մ. Աթոյանը նշեց, որ Ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժնի կանոնակարգի նախագիծը ուղարկվել էր բոլորին՝ ծանոթանալու համար և ենթադրվում է, որ մասնակիցները մանրակրկիտ կարդացել են նյութը: Կանոնակարգը քննարկվել է համապատասխան բաժնում, ԵՊՀ ԻՄ իրավախորհրդատուի հետ, ԿԲՈԱ բաժնում և համապատասխան հանձնաժողովում:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ.Օթարյանը, տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը և այլք:

Մասնավորապես Մ. Օթարյանը նշեց, որ այս կանոնակարգը վերաբերում է տնտեսական գործունեության կազմակերպման և սպասարկման բաժնի, հաշվապահության և գնումների և մատակարարման միավորված բաժինների գործունեության կանոնակարգմանը: Նախկինում դրանք առանձին բաժիններ էին: Միավորման հիմնական նպատակն էր օպտիմալացում և աշխատանքային գործընթացների հեշտացում: Նշեց, որ նախկինում հաշվապահության և գնումների առանձին բաժինները տարբեր խնդիրներ էին առաջացնում՝ պահանջելով բազմակի մակագրումներ և ուղարկումներ տարբեր բաժինների միջև: Միավորման արդյունքում այս ոլորտում գործունեությունը հստակեցվել է և հեշտացել:

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

Որոշում 82/4

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական

համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ‹‹Երևանի պետական համալսարան›› հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի Ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժնի կանոնակարգը համաձայն հավելված 6-ի,
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2020թ.-ի փետրվարի 22-ի թիվ 43 նիստում 43/3 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնտեսական գործունեության կազմակերպման և սպասարկման բաժնի կանոնադրությունը,
3. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2019թ.-ի հունվարի 26-ի թիվ 35 նիստում 35/5 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հաշվապահության կանոնադրությունը,
4. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2019թ.-ի հունվարի 26-ի թիվ 35 նիստում 35/4 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գնումների, մատակարարման և պահեստավորման բաժնի կանոնադրությունը,
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 7.1 «ԵՊՀ ԻՄ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, հ.գ.թ. Ռ. Աղուզումցյանի խմբագրությամբ «Մասնագիտական կողմնորոշում» ուղեցույցը հրատարակման երաշխավորելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի նախագահ՝ Ա.Հ. Մակարյանի *հաղորդումը:*

Ա. Մակարյանը նշեց, այս ուղեցույցը հիմնականում մեր ուսանողների աշխատանքի արդյունքն է, ովքեր պրոֆեսոր Աղուզումցյանի հետ համատեղ, մարզպետարանի աջակցությամբ և տարբեր դպրոցներում իրականացրել են հարցումներ և մասնագիտական աշխատանք: Այն նախատեսված է որպես օգտակար ձեռնարկ գործնական հետազոտություններ և ուսումնասիրություններ իրականացնելու համար, մասնավորապես մասնագիտական կողմնորոշման գնահատման նպատակով: Ուղեցույցը պարունակում է կոնկրետ թեստեր և վերլուծության մեթոդներ, որոնք արդեն կիրառվել են ուսանողների կողմից: Այն հնարավորություն է տալիս պարզելու, թե որքանով են սովորողների ընտրած մասնագիտությունները համապատասխանում իրենց հոգեբանական պատկերին:

Նա նշեց, որ ձեռնարկը ուղարկվել է գրախոսման, և ստացվել են երեք հոգեբանների, այդ թվում՝ Երևանի պետական համալսարանից պրոֆեսորներ Լոքյանի և Ավանեսյանի, ինչպես նաև ներքին աշխատակից Բաբայանի դրական կարծիքները: Գրախոսները ընդհանուր առմամբ ուղեցույցը համարել են օգտակար և դրական, որը ենթակա է հրատարակման:

Ա. Մակարյանը նշեց, որ չնայած դրական արձագանքին, մեթոդական խորհուրդը նշել է, որ անհրաժեշտ են որոշակի տեխնիկական ուղղումներ հրատարակումից առաջ: Մասնավորապես, նկատվել են ակադեմիական ազնվության հետ կապված որոշակի

շեղումներ, օրինակ՝ հղումների քանակի պակասություն։ Որոշվել է ավելի խիստ լինել այս հարցում, քանի որ ուղեցույցը հրատարակվելու է համալսարանի անունից.

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ.Օթարյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի ժ/պ, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պ/կ բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ Գ. Սիմոնյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Սիրոյանը և այլք։

Առաջարկվեց երաշխավորել ուղեցույցի հրատարակությունը։ Առաջարկվեց կազմակերպել հեղինակային հրատարակություն, որից հետո համալսարանը կարող է գնել որոշակի քանակություն գրադարանի համար։ Նշվեց, որ ֆինանսական առումով այն շատ քիչ ծախսատար բրոշյուր է, կարելի է նաև մտածել հովանավոր գտնելու մասին։

Այնուհետև բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, **որոշվեց**.

Որոշում 82/5

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 17-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 17-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- ԵՊՀ ԻՄ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, հ.գ.թ. Ռ. Աղուզումցյանի ղեկավարությամբ և խմբագրությամբ «Մասնագիտական կողմնորոշում» ուղեցույցը երաշխավորել հրատարակման։

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ